Նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-673[1]-03.10.2023-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պրոբացիայի մասին» 2016 թվականի մայիսի 17-ի ՀՕ-48-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 1-ին մասից հանել «, ինչպես նաև պրոբացիայի պետական ծառայության (այսուհետ՝ Պրոբացիայի ծառայության) գործունեության» բառերը:

Հոդված 2. Օրենքի 1-ին գլխում լրացնել նոր՝ 1.1-ին հոդված՝ հետևյալ բովանդակությամբ.

«**Հոդված 1.1. Պրոբացիա իրականացնող մարմինը**

1. Հայաստանի Հանրապետությունում պրոբացիա իրականացնում է պրոբացիայի ծառայությունը (այսուհետ՝ Պրոբացիայի ծառայություն):

2. Պրոբացիայի ծառայության խնդիրները, կազմակերպման և գործունեության հիմունքները, պրոբացիայի ծառայության՝ որպես պետական ծառայության առանձին տեսակի առանձնահատկությունները, ինչպես նաև պրոբացիայի ծառայության լիազորությունները սահմանվում են «Պրոբացիայի ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, սույն օրենքով և այլ իրավական ակտերով:»:

Հոդված 3. Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասում «Քաղաքացիական» բառը փոխարինել «Պրոբացիայի» բառով:

Հոդված 4. Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում «քաղաքացիական» բառը փոխարինել «հանրային» բառով, ինչպես նաև նույն կետից հանել «պաշտոնների անվանացանկով նախատեսված» բառերը:

Հոդված 5. Օրենքի 4-րդ հոդվածում՝

1) վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«**Հոդված 4. Պրոբացիայի նպատակները**».

2) 2-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 6. Օրենքի 15-րդ գլխի վերնագրում «ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ» բառը փոխարինել «ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐԸ» բառերով, ինչպես նաև ուժը կորցրած ճանաչել 52-56-րդ հոդվածները:

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից: